ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
ОБШИНА ЛЕРНАМЕРДЗ

Գյուղ Լեռնամերձ
Արագածի 24
Հեռ՝094-49-56-90
Էլ.փոստ Lernamerdz@mail.ru

Село Лернамердз
Ул, Арагаци 24
Тел, 094-49-56-90
Эл,почта lernamerdz@mail.ru

N 103 20.12.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Մաթևոսյան

Ձեզ է ուղղարկվում Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 2-22843-2019
23 12 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20 - Ն

«17» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թ. Թիվ 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, <<Բյուջետային համակարգի մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ , 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը..

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 13316.0 հազար դրամ, ծախսերի գծով՝13316.0 հազար դրամ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը/պակասուրդը/՝ համաձայն հատված 4-ի
6. Հաստատել համայնքի բյուջեյի դեֆիցիտի / պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի

7. Հաստատել համայնքի բյուջեյի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 30 տոկոսը:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԿՈՂՄ ԴԵՄ ՉԵՌՆՊԱՀ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ռ. Ավդալյան
Լ. Ավետիսյան
Մ. Մինասյան

Համայնքի ղեկավար՝ Վ. Սիրզոյան

Կ. Տ.

2019 թվականի դեկտեմբերի «17»

գ. Լեռնամերձ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համանքի գործունեությանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձի համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի ավագանու թիվ 6 նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 20 -Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՈՒՂԵՐՁ

ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Լեռնամերձի համայնքի 2020 թվականի բյուջեն: Լեռնամերձի համայնքի 2020 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի հնգամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Լեռնամերձի համայնքի 2020թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝
Ընդամենը 13316.0 հազար դրամ:
Լեռնամերձի համայնքի 2020թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել է 2006.5 հազար դրամ: Պետական բյուջեից տրվող դոտացիան՝11309.5 հազար դրամ: 2020 թվականին հարկերի գծով նախատեսվել է 2006,5 հազար դրամ, որից հողի հարկ 655,5 հազար դրամ, 70.0 հազար դրամ շենքերի և շինությունների գույքահարկ, գույքահարկ փոխադրամիջոցների հաշվին [illegible]5,0 հազար դրամ: Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները: Գույքահարկը կանխատեսվել է հաշվի առնելով գանձելիության մակարդակը:
Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսվել է 50.0 հազար դրամ:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 0 դրամ:
Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ 196.0 հազար դրամ, համայնքի ծառայությունների մատուցումից գանձվող վճարներ 360.0 հազար դրամ՝ կից տեղեկություններ:
Նախորդ 2018 թվականի փաստացի կատարված, 2019 թվականի հաստատված և 2020 թվականի նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):

ԾԱԽՍԵՐ

Լեռնամերձի համայնքի 2020 թվականի բյուջեով ծախսերը նախատեսվել են՝ Ընդամենը 13316.0 հազար դրամ, այդ թվում՝
Ընթացիկ ծախսերի գծով՝ 13316.0 հազար դրամ, կապիտալ ծախսերի գծով 0 դրամ:
Լեռնամերձի գյուղական համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում է (հատված 2,3,6)
Համայնքի 2020 թվքականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2018-2019 թ.թ բյուջեի փաստացի կատարված և 2020 թ. սպասվելիք ծախսերով:

ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝13316.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ
01 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով ծախս է նախատեսվել 13316.0 հազար դրամ, որից ընթացիկ ծախս՝12956.0 հազար դրամ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 360.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 360.0 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ԱՄԻՐՋՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՍԱԾԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18 -Ի
ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ Ն 15-Ա ՈՐՈՇՄԱՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 5
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը /դրամ/
1	Համայնքի ղեկավար	1	255000
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
2	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	190000
3	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	180000
4	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	130000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
5	Անասնաբույժ	0.5	46000
Ընդամենը		5	801000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 3/28516-19
06.12.19

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ՝ press@moj.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ԼԵՌՆԱՄԵՐՁ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Վ.ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 98 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
հեռ. 594116

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» **որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն